ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

13 ՄԱՐՏԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Հրայր Ասատրյանը, Անահիտ Բաբայանը, Նազիկ Գեվորգյանը, Էդգար Համբարձումյանը, Հրանդ Հարությունյանը, Ռոբերտ Հովսեփյանը, Վարդկես Ղարիբյանը, Իրինա Սիրունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Լյուդվիկ Յայլոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գրապիոն Շառոյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, և 62-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2025թվականի մարտի 13-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՎ «ԱՄԲԵՐԴԻ Հ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 3-ի «Ծիածանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող՝ Գ.Եղիազարյանի, ինչպես նաև «Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց «ՊՈԱԿ-ի տնօրեն Զ.Մաղաքյանի գրությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի՝ թվով երկու գյուղերի միջնակարգ դպրոցներում գործող նախակրթարանների դաստիարակներին աշխատավարձ հատկացնելու նպատակով տրամադրել գումար՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

« ՕՍՏ ՄԱՅՆԻՆԳ » ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետով, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Օստ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Օստ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի վարչական տարածքում գտնվողՀՀ Արմավիրի մարզի Քասախի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տեղամասում օգտակար հանածոյի

արդյունահանման նպատակով կատարվելիք աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Կողմ-0 Դեմ-12 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով անկախ գնահատող «ԴԱՏԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2025 թվականի փետրվարի 25-ի թիվ 25-003Պ եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականությունը հանդիսացող փոխադրամիջոցները օտարել աճուրդային կարգով:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող TOYOTA մակնիշի CAMRY 2.5 տիպարի, 800 CG 61 հաշվառման համարանիշով, 4T4BF3EK1BR197230 նույնացման համարով 2011 թվականի արտադրված սև գույնի թեթև մարդատար սեդանի մեկնարկային գինը սահմանել հավանական շուկայական արժեքի գնով՝ 3 360 000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող NISSAN մակնիշի SENTRA 1.8 տիպարի, 537 CL 61 հաշվառման համարանիշով, MNTAB7A90D6000757նույնացման համարով 2013 թվականի արտադրված սև գույնի թեթև մարդատար սեդանի մեկնարկային գինը սահմանել հավանական շուկայական արժեքի գնով՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող VAZ մակնիշի 21214 տիպարի, 540 CL 61 հաշվառման համարանիշով, XTA21214061798410 նույնացման համարով 2005 թվականի արտադրված սպիտակ գույնի թեթև մարդատար ունիվերսալի մեկնարկային գինը սահմանել հավանական շուկայական արժեքի գնով՝ 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող VAZ մակնիշի 21074 տիպարի, 533 CL 61 հաշվառման համարանիշով, XTA21074092867462 նույնացման համարով 2009 թվականի արտադրված սպիտակ գույնի թեթև մարդատար սեդանի մեկնարկային գինը սահմանել հավանական շուկայական արժեքի գնով՝ 296000 (երկու հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով , հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 3-ի «Հայթաղի Հ.Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի վարչատնտեսական համակարգող Լ.Ենգիբարյանի գրությունը, «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Խաչատրյանի 2025 թվականի մարտի 4-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2025 թվականի մարտի 8-ից /կանանց միջազգային օր/ մինչև ապրիլի 7-ն /մայրության և գեղեցկության տոն/ ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 17 գյուղերի բնակիչ համարվող ծերության թոշակառու կանանց նվերներ, դպոցների աշխատակազմին, համայնքապետարանի աշխատակազմին, համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկի աշխատակազմին հյուրասիրության համար հատկացնել 8 500 000 /ութ միլիոն հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումար:

2.Խոյ համայնքի ավագանու նիստերի դահլիճի համար գույք ձեռք բերելու համար տրամադրել 3 500 000 /երեք միլիոն հինգ հարյուր /ՀՀ դրամ գումար:

3.«Հայթաղի Հ.Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրել 990 000 /ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ գումար՝ դպրոցի հանդիսությունների դահլիճի համար 90 հատ աթոռ ձեռք բերելու համար :

4. «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրել 481 000 /չորս հարյուր ութսունմեկ հազար/ՀՀ դրամ գումար ՝ աշակերտական երկտեղանոց սեղան-աթոռ ձեռք բերելու համար:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի առաջին մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի « Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 180-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԷՋՄԻԱԾԻՆ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-689-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 3-ի 314-Ն որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավուքների պետական գրանցման թիվ 23052024-04-0027, 23052024-04-0061, 01072024-04-0020, 01072024-04-0049, 13092024-04-0017 վկայականները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Խոյ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, որոնց վրա առկա է խորքային հոր, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Էջմիածին» ջրօգտագործողներ ընկերությանը:

ա)Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Գեղակերտ1 խորքային հոր

Կադաստրային ծածկագիրը ՝ 04-087-0904-0001

Մակերեսի չափը՝ 0.00355 հա

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ այլ հողատեսք:

բ) Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Հայթաղ Ա.Առաքելյան փողոց 78

Կադաստրային ծածկագիրը ՝ 04-055-0542-0002

Մակերեսի չափը՝ 0.00406 հա

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման:

գ) Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Արշալույս 4-րդփողոց 2/1

Կադաստրային ծածկագիրը ՝ 04-021-0846-0002

Մակերեսի չափը՝ 0.00423 հա

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ այլ հողեր:

դ)Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Արշալույս 17-րդ փողոց 129/1 հողամաս

Կադաստրային ծածկագիրը ՝ 04-021-0008-0028

Մակերեսի չափը՝ 0.0042 հա

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման:

ե) Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Գեղակերտ Ն.Զարյան փողոց 2/1 խորքային հոր

Կադաստրային ծածկագիրը ՝ 04-087-0913-0002

Մակերեսի չափը՝ 0.00362 հա

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել «Էջմիածին» ջրօգտագործողներ ընկերության հետ որոշմամբ նշված գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագրի կնքումը՝ պայմանագրի նոտարական վավերացմամբ և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցմամբ:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետով նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ կատարումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 145-Ա ՈՐՈՇՄԱՆ N10 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և հիմք ընդունելով«ԽՈՅԻ ԲԱ» ՀՈԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Ավետիսյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 145-Ա որոշմամբ հաստատված N10 հավելվածնում կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝

1/Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԶԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և 230-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով և երրորդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բնակիչների՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ նրանց ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի և փոխադրամիջոցի նկատմամբ՝ համաձայն հավելված 1-ի, հավելված 2-ի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԷՋՄԻԱԾԻՆ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-689-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 3-ի 314-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Էջմիածին» ջրօգտագործողներ ընկերությանը:

ա) Ծիածանի գյուղի ներտնտեսային ոռոգման ջրագիծ՝ ЛР4- 11726մ, ЛР-8164մ:

բ) Գեղակերտ գյուղի ներտնտեսային ոռոգման ջրագիծ՝ ЛР4- 5340մ:

գ) Արագած գյուղի գերեզմանոցներից գյուղի մեջ իջնող ներտնտեսային ոռոգման ջրագիծ՝ ЛР4- 187մ:

դ) Դողս գյուղի Բաղրամյան փողոցի 1-ին նրբանցքի ներտնտեսային ոռոգման ջրագիծ՝ ЛР4- 122մ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել «Էջմիածին» ջրօգտագործողներ ընկերության հետ որոշմամբ նշված գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագրի կնքումը՝ պայմանագրի նոտարական վավերացմամբ և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցմամբ:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետով նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ կատարումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Սերգեյ Գագիկի Հովհաննիսյանի 2025 թվականի փետրվարի 3-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող, Սերգեյ Գագիկի Հովհաննիսյանի սեփականությունը հանդիսացող 04-021-0302-0002 կադաստրային ծածկագրի, 1,1659հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ծածկ, չորանոց, ջրավազան և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Քաջիկ Ռոբերտի Հունոյանի 2025 թվականի փետրվարի 27-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի վարչական տարածքում գտնվող, Քաջիկ Ռոբերտի Հունոյանի սեփականությունը հանդիսացող 04-037-0132-0004 կադաստրային ծածկագրի, 0,4386 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց և տնտեսական շինություն կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հովհաննես Գառնիկի Ղազարյանի 2025 թվականի փետրվարի 25-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող, Հովհաննես Գառնիկի Ղազարյանի սեփականությունը հանդիսացող 04-053-0624-0005 կադաստրային ծածկագրի, 0,292 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Խաչատուր Հովհաննեսի Զուլոյանի 2025 թվականի փետրվարի 27-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող, Խաչատուր Հովհաննեսի Զուլոյանի սեփականությունը հանդիսացող 04-055-0212-0005 կադաստրային ծածկագրի, 0,4519 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման
և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց և տնտեսական շինություն կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հովսեփ Արմենի Շահբազյանի 2025 թվականի մարտի 3-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող, Հովսեփ Արմենի Շահբազյանի սեփականությունը հանդիսացող 04-055-0205-0010 կադաստրային ծածկագրի, 0,6032 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման
և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Ալբերտ Վիրաբի Շահբազյանի 2025 թվականի մարտի 3-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող, Ալբերտ Վիրաբի Շահբազյանի սեփականությունը հանդիսացող 04-021-0251-0005 կադաստրային ծածկագրի, 0,3277հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց և օժանդակ շինություն կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի7-րդ հոդվածով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հրաչիկ Սահակի Գալստյանի 2025 թվականի մարտի 5-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող, Հրաչիկ Սահակի Գալստյանի սեփականությունը հանդիսացող 04-053-0603-0003 կադաստրային ծածկագրի, 0,75հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման

և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց և տնտեսական շինություն կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն օտարել աճուրդային կարգով՝ համաձայն հավելվածի:
2.Մասնակցության վճարը՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:
Նախավճարը՝ մեկնարկային գնի 50 %-ի չափով: Սահմանափակումներ չկան:
3.Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի նվազագույնը 5 %-ի չափով:
4.Համայնքի ղեկավարին՝ Լյուդվիկ Յայլոյանին, իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթներ՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանի՝ ցանցի արդիականացման նպատակով օպտիկամանրաթելային մալուխ անցկացնելու համար համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները օգտագործելու վերաբերյալ 2025 թվականի փետրվարի 27-ի 423/85-1 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Խոյ համայնքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության ցանցի արդիականացման նպատակով օպտիկամանրաթելային մալուխ անցկացնելու համար համայնքային սեփականություն հանդիսացող թվով 29 հենասյուները/26 հատ Արագած բնակավայրում, 3 հատ Լեռնամերձ բնակավայրում/ անորոշ ժամկետով, ամսական մեկ հենասյան համար 500 / հինգ հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերությանը վարձակալության տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու անդամների առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար՝ Լյուդվիկ Յայլոյանին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ 584000 / հինգ հարյուր ութսունչորս հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի երկրորդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի բնակիչ Գևորգ Հենրիկի Համբարձումյանի կողմից ստացված դիմումը, ով ունի հաշմանդամության 2-րդ կարգ /վնասվածքը ստացել է հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության ժամանակ/ և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել արտոնություն՝ փոխադրամիջոցի գույքահարկից ազատել, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի բնակիչ Գևորգ Հենրիկի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող FORD FUSION 2.5 մակնիշի 37 QS 800 պետհամարանիշով փոխադրամիջոցի նկատմամբ՝ 38750 /երեսունութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ գումարի չափով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ ԾՆՈՂՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել արտոնություններ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի ենթակայության՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, մանկապարտեզներում երեխաների համար գանձվող ծնողվճարների գծով հետևյալ չափերով.

1)ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար գանձվող ծնողվճարների գծով սահմանել 100% արտոնություն:

2) ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների և միակողմանի ծնողազուրկ երեխաների համար գանձվող ծնողվճարների գծով սահմանել 50% արտոնություն (10000-5000(50%)=5000):

3) նույն ընտանիքից միևնույն ժամանակ մանկապարտեզ հաճախող 2 և ավելի երեխաների համար գանձվող ծնողվճարների գծով սահմանել 50% արտոնություն (10000-5000(50%)=5000):

4)նպաստառու ընտանիք հանդիսացող երեխաների համար գանձվող ծնող վճարների գծով սահմանել 30% արտոնություն (10000-3000 (30%) =7000):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

Ավագանու անդամներ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՍԵՎԴԻՆ ԹԵՋՈՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գրապիոն Շառոյանը